ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

17 մարտի 2016 թվականի **թիվ 11** քաղ. Մոսկվա

«Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատակիցների ատեստավորում անցկացնելու մասին» հիմնադրույթում փոփոխություններ կատարելու վերաբերյալ

«Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին» հիմնադրույթի («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 1 հավելված) 54-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը **որոշեց.**

1. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 98 որոշմամբ հաստատված՝ «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատակիցների ատեստավորում անցկացնելու մասին» հիմնադրույթում կատարել հետեւյալ փոփոխությունները՝

ա) 5-րդ կետի «բ» ենթակետը «ժամանակացույցի» բառից հետո լրացնել «եւ ձեւի» բառերով.

բ) 6-րդ կետը չորրորդ պարբերությունից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ պարբերությամբ՝

«Հանձնաժողովի դեպարտամենտի այն պաշտոնատար անձը կամ աշխատակիցը, որի իրավասությանն են վերապահվում կադրային հարցեր.».

գ) 9–րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«9. Ատեստավորման հանձնաժողովի նիստին հրավիրվում է Հանձնաժողովի դեպարտամենտի այն ներկայացուցիչը, որի իրավասությանն են վերապահվում իրավական հարցեր (առանց ձայնի իրավունքի):

Ատեստավորման հանձնաժողովի նիստին որպես դիտորդներ կարող են ներկա գտնվել Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների ներկայացուցիչներ:»:

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 10 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից՝	**Բելառուսի Հանրապետությունից՝**	**Ղազախստանի Հանրապետությունից՝**	**Ղրղզստանի Հանրապետությունից՝**	**Ռուսաստանի Դաշնությունից՝**
Վ. Գաբրիելյան	**Վ. Մատյուշեւսկի**	**Բ. Սագինտաեւ**	**Օ. Պանկրատով**	**Ի. Շուվալով**